ՈՐՈՇՈՒՄ 1/2

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

2012թ. փետրվարի 9-ի թիվ 1 նիստի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2011Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԹԻՎ 12/4.3 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ ԵՊՀ ներքին կանոնակարգերի նախագծերի մշակման աշխատանքները համակարգող հանձնաժողովի գործառույթներն ավելի լայն են քան սոսկ կանոնակարգերի նախագծերի մշակումը, նկատի ունենալով այդ հանձնաժողովի կազմում համալսարանի գիտական քարտուղարի ընդգրկման անհրաժեշտությունը՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Անվանափոխել Երևանի պետական համալսարանի ներքին կանոնակարգերի նախագծերի մշակման աշխատանքները համակարգող հանձնաժողովը՝ այն վերանվանելով **Երևանի պետական համալսարանի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողով**ի:
2. ԵՊՀ իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի կազմում հաստատել ԵՊՀ գիտական քարտուղար Մենուա Անդրանիկի Սողոմոնյանին:
3. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ գիտական խորհրդի 2011թ. հոկտեմբերի 21-ին ընդունված թիվ 12/4.3 որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Սիմոնյան